Դանիել Վարուժան

Անիի Ավերակներուն մեջ

Ա

Ըլլա լացի, համբույրի,
Հիշատակի, մըտածման,
Մըոընչելու համար ըլլա, օ՛ն, մըտնենք.
Մըտնենք հըսկա քաղաքն հըսկա ածյունի,
Մըտնենք Շիրիմն հայության…

Ողջո՜ւյն, Անի, գերեզմնոց,
Ուր կը փըտին ոսկորներն հաղթ Անցյալին.
Ողջո՜ւյն, Անի, օրորան,
Ուր փլուզի տակ, կարիճի սև արյունով
Մեր Ապագան կը մեծնա.
Ողջո՜ւյն, Մեռե՜լ, Մա՜յր, ողջո՜ւյն.
Ահա կու գամ, ես վերջին
Նորաբողբոջ գըլուխը հայ Հիդրային,
Կու գամ կյանքիդ փառքովը մա՛հդ օրորել.
Ըսել, թե մեծ եղար դու,
Կամ մեծ խոստումը մեծության, դու եղար
Լուսակայլակ պողպատ ըստինք մ'որուն դեմ,
Խուժդուժ ցեղերը ծըծելու դեռ անվարժ՝
Եկան նոթի լընդերն իրենց ջախջախել.
Ծեր Ասիո շեմին վրա դո եղար

Երեք դարու սիրտն՝ եթե Հույնն ըղեղն էր,
Սիրտ կենսաբուխ՝ որուն աչքերն հառած պիշ՝
Նենգ Բյուզանդիոնն, այդ բոզորդին Հրոռմի
Քեզ կը դավեր լափլիզելու ախորժով:
Եվ ան դավեց և ան հաղթեց. ու ավա՜ղ,
Երբ դրոշակն իր ցրցված տրխմար արքայիդ
Հովհաննեսի շիրմին վրա՝
Վեստ Սարգըսյան կ'ըլլար խըլան խոստացված,
Քու բալլիքներրդ Վոսփորի բանտին մեջ
Երիտասարդ թագավորիդ թևերուն
Կուռ շղթաներ կըղպեցին:

Բ

Ո՜վ պատուհաս. կորսըվեցար դու այլևս,
Երբ Պարսն և Հույնն, երկու ոսոխ ոսոխներդ,
Իրարու դեմ ըզքեզ ասպար կանգնեցին,
Կամ իբրև որս մ'որ արդեն իր մագիլով
Նախ իր սիրտն է խոցոտեր,
Քեզ անցուցին Մոնոմախոսն ու Տուղրիլ,
Պերոզն ու ժանտ Արփասլան՝
Ժանիքներե ժանիք, թաթե ի թաթուլ.
Եվ, դեմ դիմաց կզակներն իրենց ջարդելով,
Հիմնաքարերդ հանեցին՝
Որպեսզի սև դամաբանաքարդ հորինեն:
Ա՛լ այն օրեն դու իբրև շենք մ'հոյակապ՝
Ուրկե հազար կայծակ մեկեն է անցեր՝
Քայքայվեցար մարմար մարմար, ծեփ առ ծեփ:
Ու, ո՛վ ցասում, ո՛վ ամոթ,
Քեզ դեմ առ դեմ բըզքըտողները նենգժոտ
Չեղան արծիվ՝ այլ գայլե՜ր….

Գ

Արդ քարուքանդ կը հանգչիս
Եվ նըշխարներդ ինը դար է որ կ'ապրին.
Ժամանակին ձեռքը չեղավ այնքան հաղթ
Աճյուններդ այդ մըրրիկներուն հանձնելու.
Բայց ծոցիդ մեջ ալ բընա՛վ
Սըմբատի սոս նըժույգը չի՛ խըրխընջեր,
Այն չի թոթվեր արյունթաթախ բաշերն իր
Քաջ ձիուն դեմ Ափշինի,
Ու կոչնակներն ու շեփորներն ոսեցոլ՝
Որոնց ի լուր թուրը խաչով կը ձուլվեր.
Հոն լըռած են՝ ապրեցնելով իրենց տեղ
Բուի հազար սերունդներ:
Այդ լըռության չոչիկի լայն թևին տակ
Կ'աճի եղիճն արտասուքովն աստղերուն.
Եվ հոն բաղեղն հայրենասեր թևերով
Կը գըրկե հողըդ տըրտում
Իր պատառիչ կալծքարերով միասին.
Եվ խոտ մ'հազիվ, բարձրացած
Ճամբաներուն վրա անկոխ՝
Կը ծածկե սողն օձի մ'արփվույն տակ ճեմող:

Դ

Ի՞նչ մընաց, ի՞նչ. Պարիսպներեն քարակուռ՝
Որոնք ըզքեզ գըրկած տըվին կուրծքերնին
Ասիական մըրրկարշավ ցեղերուն.
Պալատներեդ, ամրոցներեդ, սյուներեդ,
Աշտարակի սըլաքներեդ՝ ուր ծըփուն
Կարմիր դրոշակ մ'հայկական
Կ'սրբեր քրտինքն արծիվներուն ճամբորդող,
Խոյակներեդ, գըմբեթներեդ՝ որոնք օր
Մ'ամպին մեջ՝ շանթն Էին մեջ բախտն հեգնելով՝

Ժամանակի բռունցքին դեմ
Կ'ըլլային կումբ ձուլված փառքի հանքերեն,
Ջորանոցեդ, տաճարներեդ, այո՛, քու
Հազարումեկ տաճարներեդ՝ որոնց մեջ,
Դեպի հավատքն ուղղաբերձ
Մինչ բազուկներ կը հոգնեին, կ'հեղգային
Մինչ հին արյունն Արամյան
Իր հեթանոս ռազմիկ թափեն կը սանձվեր,
Եվ մինչ Հիսուսը կը ծըներ արցունքով
Լաստիվերտցին և նենգ Հուդան՝ Կիրակոս,
Այդ հազար մեկ տաճարներուդ մեջ կ'ըսեմ,
Քանդակ քանդակ, զարդ առ զարդ,
Արվեստ մը նոր, արվեստ մը հայ,
Արվեստն աղջիկ Աստուծո, քույր Բընության,
Արվեստը հարս Տիեզերքին,
Ժող'վուրդներու և Ազգերու վախճանած
Տապանագիրն ու շիրմապսակն այդ վերջին
Իբր աղավնի մ'ոսկեդըրվագ ուրագով
Քանդակված՝ այդ գըմբեթներուդ ներքև սուրբ,
Բատուցներուդ, խոյակներուդ, մույթերուդ
Մեջեն լըռիկ, գըլուխը դուրս կարկառած՝
Դեպի երկինք, աղվոր, վեհ,
Թռիչները լա՜յն կը պարզեր...
Հիմա, ավա՜ղ, ատոնցմե,
Այդ բյուրավորձաձանչներեդ, ո՛վ Անի,
Ըսե՛, ըսե՛, ի՞նչ մընաց...

Ե

Կը պատե շուրջը լըռություն: Լայնարձակ
Դաշտին վըրա, լուսնակի քա՛ղցր շողով
Ավերակները կ'ողողվին: Հեռուեն
Միջոցին մեջ աստղալից

Լոկ կը լրսվի սույլն հովերուն ճամբորդող:

Անի հավե՛տ կը լրռե...

Ոտքրս փրլած քարի մը վրա կը դրնեմ,
Եվ ուրիշի մ'հետո, հետո ուրիշի
Մ'ու կ'ելլեմ դե՛պի կիսաքանդ պարրսպին.
Ծերպերն որմին, ժամանակի վերքեր, ինձ
Սանդուխ կ'ըլլան. քայլափոխես փրխրրված
Կը թավալին կոշկոռներ,
Եվ մատերուս տակ ճանկող՝
Բաղեղներեն, մորմերեն
Քընաթաթախ մողեզներ վար կը թափին:
Ու ես կ'ելլեմ. հոգիս խոր
Արբշրռության մ'ուժին տակ
Ջիս աստղերուն կը քաշե.
Կը շուլլրվիմ, կը մագլիմ.
Կայծքարերուն դեմ կուրծքրս մերկ կ'արյունի,
Կը մնա մաս մ'ըզգեստես
Վարը փուշի մը ճանկին մեջ ավազակ.
Բայց ես կամշոտ, որսին դիմող վագրի պես,
– Եթե ազատ բարձրությունն որսն է հոգվույն –
Կուռ ու տենդոտ խոյանքով,
Մութն ու փլատակն ոտքերես վար թոթափած,
Նախնիներուս բյուր գանկերուն վրրա գոս
Հուսկ ոստումով մը խրրոխտ
Պարիսպներուն հառաչակուլ կը կանգնիմ...

Ջ

Ո՞վ բնազդական դու վերելք,
Ո՞վ խոյացման գինովություն՝ նույնիսկ սև
Դամբանի վրա կամ ոսկրի,

Ո՞վ վեհ բարձունք՝ որ կը գըգվես ճիղմ հոգիս
Ձիս ընելով աճյունին վրա պապերուս
Բողբոջ մ'որ դեռ կը զարդարե կոճղը հին.
Ո՞վ բարձրություն թովչական՝
Որ կապույտին և խավարին մեջտեղ զիս
Մըտածումի լազվարթ լարով կ'առկախես.
Կու տաս անցուկ մխիթարությունը սըրտիս՝
Որ վարն ոտքիս տակ գըտնեմ
Անիի մեջ ցոլքն երկընքի մեծության,
Ըզգամ թե մեր շիրմին վրա
Մոլորակները դեռ զիրենք կը գըծեն,
Թե խավարն այս՝ է Խորհուրդին դեմքը վեհ,
Փլատակը՝ մե՛ղքն Հավերժին.
Անվո փոշին հարդգողն, և կամ աս շըրջմոլ
Փոսուռան աստղ մ'է չըքնաղ.
Սա գանկը հոս լուսին մըն է, ես՝ Աստված...
Ըլլալ Աստվա՜ծ, ո՛վ հեգնություն, այս ըլլալ
Է միմիայն ծաղրանըկարն Աստուծո,
Քանի որ մեր հոգին հարճն է Բընության,
Եվ սոսկ անոր տաք ծոցին մեջ՝ բեղնավո՛ր,
Չունենալով նույն ինք իրե՛ն սեփական
Հայրենիքի այս Ոչընչին, բոհին դեմ՝
Իբր առաջին սերմընցու
Խո՜սք մ'որ ստեղծե, ներդաշնակե, պոռթկալով
Փոշիներեն Անիի
Քանան մը նո՜ր և ազա՜տ:

Է

Ի՜նչ, ունենալ աչքի ներքև դիակներ՝
Որ եղած են ատենով
Արյանդ արյուն, սերմիդ սերմ
Եվ, ո՛հ, առանց հարուցանել գիտնալու՝

Այսպես դիտե՞լ ծալապատիկ թևերով,
Ի՞նչ, տեսնել որ խըխունջ մ'այսօր կը չափե
Հըսկա շենքերն այն՝ երկու թել լորձունքով,
Եվ խորանի խորշին մեջ լոկ կ'ապրի
Բուն, սևազգեստ ճըգնավոր,
Տեսնել, որ լուռ կը փըտին
Ավերներու տակ հերոսի բազուկներ,
Գանկեր, սըրտեր՝ որոնց արյունը եղավ
Թույն՝ իժերուն, ա՛յնչափ որ լի էր ոխով.
Տեսնել որ փլած պատվարներու, դըղյակի
Ճեղքերուն մեջ կը մեռնի
Շող մ'արևու, Անուն մը հին, Ազգ մը մեծ,
Եվ գահերու բեկորներուն վրա թափուր
Արծիվն ամպեն կը ծըրտե՞...
Ի՞նչ, մինչդեռ վարը, անդին,
Այս ջընջումին հավասար
Կը ջընջըվին, կ'այլասերին հոգիներ
Խեղդըվելով նույնիսկ իրե՛նց արյան մեջ,
Կամ մալ ու կուրտ եզի պես
Ժուժով մը վատ, յուրաքանչյուրհարվածի
Ներքև ջըլատ կ'ըսեն. – Լըծե՛: – Ո՛հ, ի՞նչ, ի՞նչ,
Առջևը այս ամենուն,
Շուրջիս այս մութ ծըփանքին մեջ դիերու,
Ոսկըրներու, նըշխարներու, արյունի,
Մընալ կանգուն, մինավորիկ, անկարո՞ղ,
Եվ չը կըրնալ այս թոհբոհեն հանել դուրս
Վերածընո՞ւնդ, վերածընո՞ւնդ մ'արփագեղ...

Ո՛վ այպանք, ո՛վ նախատիք,
Ուրեմն ինչո՞ւ ապրիլ, ինչո՞ւ ընդունայն
Հայրենիքի անունն ասա՛նկ մըռընչել,
Երբոր Ողջերը թըմրած
Քեզ չե՛ն ուզեր լըսել, ոստնուլ չե՛ն ուզեր,

Եվ ռազմերգեդ՝ ահաբեկ՝
Ականջներնին ծոցերնուն մեջ ղողած
Երբ գըլխուդ շա՛նթ կը մաղթեն,
Ուրեմն ինչո՞ւ, ինչո՞ւ ապրիլ...

Ը

Վարը, հոս,
Օձ մը հըսկա՝ գըլուխը փոսեն տընկած դուրս՝
Լուսնի շողով կը նայի ինձ. օ՛ն, եկուր.
Դու, որ ունիս այդ աչքերուդ մեջ կանանչ
Մահվան անուշ մխիթարությունն. օ՛ն, եկուր.
Կըրունկս քուկդ է. քուկըս տաք
Երակներս այս. խա՛ծ ու խայթե. թող տապալ
Գըլորիմ վար, Ախուրյանի ողբին մեջ,
Եվ վարը այն որձաքարին վըրա սև
Ջախեմ գլուխս, ու իմ խեղճ
Հայրենիքիս փոշիներուն վըրա սա՝
Ըղեղիս խյուսը փըռեմ...